

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի
աջակցման բաժին**

Գորիսի պետական համալսարանի շրջանավարտների վերաբերյալ գործատուների
կարծիքի ուսումնասիրության վերլուծություն


Գործիսի պետական համալսարանի շրջանավարտների վերաբերյալ գործատուների կարծիքի ուսումնասիրության վերլուծություն

ԳՊՀ Կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի աջակցման բաժինը (ԿՈԱ և ՈՒԿԱ) գործատուների շրջանում իրականացրել է շրջանավարտների վերաբերյալ հարցումներ: Հարցումներն իրականացվել են տարածաշրջանի 23 դպրոցների տնօրենների հետ, 19 այլ գործատուների՝ բանկեր, ՆՈՒՀ-եր, կազմակերպություններ, որտեղ ախատում են մեր շրջանավարտները:

Համագործակցում է՞ք ԳՊՀ-ի հետ


ԴՊՐՈՑՆԵՐ

Համագործակցություն ԳՊՀ-ի հետ		
Ընդհ. թիվը	Այո	Ոչ
23	23	0



ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Համագործակցություն ԳՊՀ-ի հետ		
Ընդհ. թիվը	Այո	Ոչ
19	11	8



Համագործակցությունը ԳՊՀ-ի հետ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Համագործակցություն ԳՊՀ-ի հետ		
Ընդհ. թիվը	Այո	Ոչ
42	34	8




Ինչպես երևում է վերլուծությունից, հարցվածներից 8 կազմակերպություն նշել են, որ չեն համագործակցում ԳՊՀ-ի հետ: Նշենք, որ չհամագործակցող կազմակերպությունները հիմնականում նախակրթարաններն են, որտեղ աշխատող մեր շրջանավարտները լրացուցիչ նախադպրոցական կրթություն են ստանում արդեն իսկ քոլեջում: Այս վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ այդ մասնագիտությունը ներդնելով՝ ավելի սերտ կհամագործակցեք ՆՈՒՀ-երի հետ, մեր շրջանավարտներն ավելի ինտենսիվ կընդգրկվեն աշխատանքի արդեն իսկ մասնագիտությամբ:

Մեր ուսանողների պրակտիկան կազմակերպվում է Ձեր կազմակերպությունում հարցին պատասխանել են հետևյալ կերպ.


Դպրոցներ

Պրակտիկայի կազմակերպում		
Ընդհ. թիվը	Այո	Ոչ
23	22	1




Այլ կազմակերպություններ

Պրակտիկայի կազմակերպում		
Ընդհ. թիվը	Այո	Ոչ
19	9	10



Ընդհանուր




Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, 42 կազմակերպությունից 11-ում պրակտիկա չի կազմակերպվում, որից 10-ը այլ կազմակերպություններ են:

Գործատուներին առաջարկվել էր պատասխանել, թե իրենց աշխատողներից քանիսն են ԳՊՀ շրջանավարտներ, նրանցից քանիսն են աշխատում մասնագիտությամբ, քանիսն են անցել մրցույթով: Պատկերը հետևյալն է.


23 դպրոցներում աշխատող շրջանավարտների թիվը հետևյալն է՝

Դպրոցներում աշխատող շրջանավարտներ	
Ընդհանուր թիվը	253
Մասնագիտությամբ	221
Մրցույթովանցած	100




Այլ կազմակերպություններում աշխատող շրջանավարտների թիվը՝

Այլ կազմակերպություններում աշխատող շրջանավարտներ	
Ընդհանուր թիվը	163
Մասնագիտությամբ	47
Մրցույթով անցած	93



42 գործատուների մոտ աշխատում են

Գործատուների մոտ աշխատող շրջանավարտներ	
Ընդհանուր թիվը	416
Մասնագիտությամբ	268
Մրցույթով անցած	193



Ինչպես երևում է վերլուծության մեջ, 416-ից ընդամենը 268-ն է աշխատում մասնագիտությամբ, բայց եթե առանձին նայենք դպրոցների կտրվածքով կատարված վերլուծությանը, ապա կտեսնենք, որ դպրոցներում 253 շրջանավարտներից միայն 32 չէ մասնագիտությամբ աշխատում:

Գործատուներին առաջարկվող հաջորդ հարցը հետևյալն է.

Ի՞նչ վերապատրաստում են անցել ԳՊՀ շրջանավարտները, որպեսզի համապատասխանեն կազմակերպության պահանջներին (ընդգծել).


ա. Չեն վերապատրաստվել,

բ. Վերապատրաստման կարիք չեն ունեցել,


գ. Անցել են հատուկ մասնագիտական վերապատրաստում,

դ. Անցել են ընդհանուր մասնագիտական վերապատրաստում:

Դպրոցներ



Այլ կազմակերպություններ



Գործատուներին առաջարկվել էր նաև պատասխանել հետևյալ հարցին՝


Ինչպե՞ս կարող է ԳՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը նպաստել Ձեր կազմակերպության գործունեությանը.

ա. Կազմակերպել մասնագիտական քննարկումներ, կլոր սեղաններ,

բ. համագործակցության այլ տեսակներ (առաջարկել) _____

ԳՊՀ կազմակերպություն	
Առաջարկ 1	Նոր Առաջարկ
17	6


23 դպրոցներից 17-ը համաձայն էր առաջարկված տարբերակին՝ կազմակերպել մասնագիտական քննարկումներ, կլոր սեղաններ, 6-ը ներկայացրել էր նոր առաջարկ:



Այլ կազմակերպություններ

ԳՊՀ կազմակերպություն	
Առաջարկ 1	Նոր Առաջարկ
14	5

Այլ կազմակերպություններից 14-ը համաձայն էր առաջարկված տարբերակին, իսկ 5-ը ներկայացրել են նոր առաջարկներ:



Ընդհանուր առմամբ 42 հարցված կազմակերպություններից 31-ը համաձայն էր բուհի ներկայարած առաջարկին, իսկ 11-ը ներկայացրել էին նոր առաջարկներ, մասնավորապես նոր առաջարկները վերաբերում էին համագործակցության հետևյալ ոլորտներին՝

1. ուսումնական պրակտիկա
2. մասնագիտական կողմնորոշման քննարկումներ
3. փոխադարձ այցելություններ, բաց դասերի կազմակերպում / երկկողմանի/
4. ժամանակակից գիտական տեղեկատվության օգտահոործման հնարավորություն :
5. ցանկալի է ստանալ ԳՊՀ-ի տեխնիկական աջակցությունը: Հաշվի առնելով ժամանակակից տեխնիկական առաջընթացը և դպրոցի տեխնիկական սուղ պայմանները, ԳՊՀ-ն ժամանակավորապես, համագործակցության պայմանագրի հիման վրա, դպրոցին տրամադրի էլեկտրոնային գրատախտակ՝ աշակերտների շրջանում S2S ոլորտը առավել զարգացնելու համար;
6. դասալսումներ, փորձի փոխանակում;
7. ԳՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը Գորիսի պետական քոլեջի հետ համագործակցության շրջանակներում կարող է իրականացնել մասնագիտական քննարկումներ , կլոր սեղաններ, դասախոսություններ: ԳՊՀ ներկայացուցիչները կարող են մասնակցել քոլեջի ավարտական ատեստավորմանը: նպատակահարմար ենք գտնում նաև իրականացնել դասախոսների փոխանակում՝ համապատասխան և/կամ հարակից մասնագիտություններով կամ մասնագիտական կրթական ծրագրերով;
8. Բիզնես դասընթացների կազմակերպում, ֆինանսական ոլորտի համար նեղ մասնագիտական դասընթացների կազմակերպում:
9. Ուսումնական ծրագրից հեռացնել կոմերցիոն լուծումները և վերջիններիս հիման վրա կառուցած ուսումնական ծրագրերը (օրինակ MS Windows)՝ դրանք փոխարինելով բաց կոդով և ազատ օգտագործման իրավունքով տարածված լուծումներով (օրինակ՝ GNU Linux): Բացի այն, որ բաց կոդը թույլ է տալիս ուսանողներին ուսումնասիրել լուծման

բոլոր մանրամասները, այն թույլ կտա նաև իրենց հետագա արտադրական և գիտական աշխատանքը հիմնել ազատ լուծումների հիման վրա՝ խնայելով ֆինանսական միջոցները:


10. Ուսումնական ծրագրում ավելացնել գործնական նախագծերը և պրակտիկան՝ համագործակցելով պետական կառույցների և մասնավոր ընկերությունների հետ:

Գործատուին առաջարկվող հաջորդ հարցը հետևյալ բովանդակությամբ էր..


Ինչպես կարող են Ձեր կազմակերպության մասնագետները նպաստել ԳՊՀ-ի գործունեությանը (ընդգծել).

- ա. Կազմակերպել մասնագիտական քննարկումներ, դասախոսություններ, կլոր սեղաններ,
- բ. Կազմակերպել դասընթացներ ըստ ոլորտի(պրակտիկ, տեսական),
- գ. Մասնակցություն ունենալ ավարտական աշխատանքների և մագիստրական թեզերի պաշտպանություններին,
- դ. Օժանդակել ուսանողների պրակտիկաների անցկացմանը,
- ե. Համագործակցության այլ տեսակներ (առաջարկել)_____

Դպրոցներ



Այլ կազմակերպություններ



Ինչպես տեսնում ենք, դպրոցներն ու այլ կազմակերպություններն ավելի շատ ցանկություն են հայտնել օժանդակել պրակտիկաների կազմակերմանը, այլ առաջարկներ չեն ներկայացրել:

ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական ի՞նչ որակներ կցանկանայիք փոխել(լրացնել). հարցին պատասխանել են հետևյալ կերպ.

- Ավելի բարձրացնել հոգեբանական, մանկավարժական, մասնագիտական պատրաստվածությունը
- Դասավանդման մեթոդների լիարժեք տիրապետում
- Գործնական հմտությունների զարգացում
- Մասնագիտական ոլորտում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների իմացության մակարդակի բարձրացում
- ՏՀՏ տիրապետում և մակարդակի բարձրացում
- Հասարակական ակտիվության բարձրացում
- Լեզուների իմացություն, սպասարկում

Նշենք, որ 42 կազմակերպություններից 35-ը կցանկանար մեր շրջանավարտներ մոտ որպես որակական փոփոխություն տեսնել ՏՀՏ-ի իմացության մակարդակի բարձրացումը:


Ինչպե՞ս եք գնահատում ԳՊՀ-ի հեղինակությունը(ընդգծել)

- ա. Բարձր,
- բ. Միջին,
- գ. Ցածր,
- դ. Դժվարանում եմ գնահատել:


Այս հարցին պատասխանել ե հետևյալ կերպ.

Դպրոցներ

ԳՊՀ հեղինակության գնահատում




Այլ կազմակերպություններ




Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին դիմել ԳՊՀ հարցի պատասխանն ունի հետևյալ վերլուծությունը.

Դպրոցներ

Խորհուրդ կտաք դիմել ԳՊՀ




Այլ կազմակերպություններ



Ընդհանուր առմամբ


Խորհուրդ կտաք դիմել ԳՊՀ	
Այո	Ոչ
40	2




Գործատուներին առաջարկել էինք նաև գնահատել մեր շրջանավարտներին հետևյալ 11 կետերով 1-5 գնահատման սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, 5-ը ամենաբարձր.

Հ/Հ	Գնահատեք մեր շրջանավարտների	Գնահատականը
1.	Մասնագիտական պատրաստվածությունը	
2.	Տեսական գիտելիքների իմացությունը	
3.	Գործնական հմտությունները	
4.	Հաղորդակցվելու կարողությունները	
5.	Կազմակերպչական ունակությունները	
6.	Ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում	
7.	Տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները	
8.	Վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը	
9.	Թիմային աշխատանք կատարելու ունակությունները	
10.	Ինքնազարգացման ձգտումը	
11.	Մասնագիտական ոլորտում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների իմացության մակարդակը	

Գնահատման պատկերը հետևյալն է՝
Դպրոցներ՝



Այլ կազմակերպություններ



Ինչպես տեսնում ենք, դպրոցներն ու այլ կազմակերպությունները բավականին դրական են գնահատել մեր շրջանավարտների կարողությունները: Հաշվի առնելով արտաքին շահակիցների առաջարկությունները, դիտողությունները, նկատառումները, ԳՊՀ-ն անհրաժեշտ քայլեր կձեռնարկի գործատուների համար էլ ավելի պատրաստված կադրեր պատրաստելու պատասխանատու գործընթացը: